ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր Կ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մարշալ Հովհաննես Խաչատուրի Բաղրամյանը, որի անունը ոսկե տառերով է գրված Հայրենական մեծ պատերազմի տարեգրության մեջ, արժանի տեղ է գրավում խորհրդային այնպիսի ականավոր զորավարների շարքում, ինչպիսիք են Խորհրդային Միության մարշալներ՝ քառակի հերոս Գ. Կ. Ժուկովը, կրկնակի հերոսներ Ա. Մ. Վասիլևսկին, Կ. Կ. Ռոկոսովսկին, Ի. Ս. Կոնևը, Ռ. Յ. Մալինովսկին, Խորհրդային Միության հերոսներ Ա. Ի. Երյոմենկոն, Լ. Ա. Գովորովը, Ֆ. Ի. Տոլբուխինը, որոնք պատերազմի եզրափակիչ շրջանում հանդիսանում էին ռազմաճակատների հրամանատարներ, և պատմության մեջ մնացել են «Հաղթանակի մարշալներ» անունով։

Մարշալ Բաղրամյանի զորավարական կենսագրության մասին խոսելիս հարկ է նշել, որ նա անցել է կյանքի դժվարին ուղի, շարքային զինվորից հասնելով մարշալի կոչմանը։ Այդ ուղին հարուստ է մարտական կարևոր իրադարձություններով և երկրի հասարակական, սոցիալական, քաղաքական կյանքում տեղի ունեցած վիթխարի վերափոխումներով, որոնք իրենց ճշմարտացի արտացոլումն են գտել մեծահամբավ զորավարի բազմաթիվ հուշագրություններում և հոդվածներում։

Հովհաննես Խաչատուրի (Իվան Քրիստոփորի) Բաղրամյանը ծնվել է 1897 թ. դեկտեմբերի 2-ին, նախկին Ելիզավետպոլի նահանգի Ելիզավետպոլ քաղաքի (Գանձակ, Գյանջա) երկաթուղային կայարանի բանվորական ավանում։ 1912 թ. Բաղրամյանն ավարտում է Ելիզավետպոլի երկաթուղային ուսումնարանը[1], իսկ 1915 թ. ընդունվում է Թիֆլիսի երկաթուղային տեխնիկական ուսումնարանը, որն ավարտելուց հետո, որպես երկաթգծի տեխնիկ, աշխատանքի է նշանակվում Ելիզավետպոլի իններորդ գծամասում։ Շնորհաշատ պատանու ծնողները մտածում էին իրենց որդուն երկաթուղային ինժեներ դարձնելու մասին, սակայն իրադարձությունները դասավորվեցին այլ կերպ։ 1914 թ. սկսված Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիան պատերազմի մեջ մտավ Ռուսաստանի դեմ։ Օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորություններից, Թուրքիայի կառավարությունը, նախօրոք մշակած պլանի համաձայն, սկսեց իրականացնել Արևմտյան Հայաստանի հայ բնակչության բնաջնջումը, որին զոհ գնացին մեկ ու կես միլիոն անմեղ հայեր[2]։ Այդ ահավոր լուրերը հասնում են Թիֆլիս, Ելիզավետպոլ ու Կովկասի հայաշատ վայրեր և ստիպում են երիտասարդ Բաղրամյանին՝ թողնել ուսումը շարունակելու մտադրությունն ու կամավոր մտնել ռուսական բանակի շարքերը։

«Ես այլևս չէի կարող հեռու կանգնել իմ հարազատ ժողովրդի ատելի թշնամու դեմ պայքարից,—իր հուշերում հետաղայում գրել է Բաղրամյանը,—ես արդեն 18 տարեկան էի և բավականաչափ պարզ հասկանում էի

---

[1] Н. Х. Баграмян. Мои воспоминания. Ереван, 1979, с. 7.

[2] Геноцид армян в Османской империи, под ред. М. Г. Нерсисяна. Ереван, 1968,

Կովկասյան ռազմաճակատում ստեղծված ռազմական գործողությունների և Թուրքիայում արյունալի իրադարձությունների էությունը... Դրա հետ մեկտեղ լավ էի հասկանում, որ միայն ռուսական զինվորի հետ ուս-ուսի կարելի էր մարտնչել թուրքական դահիճների դեմ։ Այդ զգացմունքներից մղված և հազթահարելով ծնողներիս դիմադրությունը, 1915 թ. հոկտեմբերի 9-ին ես կամավոր ծառայության անցա ռուսական բանակում...»[3]։

1918 թ. գարնանը թուրքերը գրավում են Սարիղամիշը, Արդահանը, Կարսը, Ալեքսանդրապոլը և շարժվում են Ղարաքիլիսա—Բաշ-Ապարան—Էջմիածին—Երևան ուղղություններով։ Ենթասպա Բաղրամյանն այդ մարտերին մասնակցում է գեներալ-մայոր Անդրանիկ Օզանյանի Հատուկ կամավորական դիվիզիայի շարքերում որպես հեծյալ դասակի հրամանատար, աչքի ընկնելով իր քաջությամբ։ Այնուհետև նա մասնակցում է Սարդարապատի ճակատամարտին և իր լուման ներդնում հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող այդ հաղթանակի գործում, որի շնորհիվ Արարատյան դաշտավայրի հայությունը փրկվեց նոր եղեռնից։ Բաղրամյանն այնուհետև ծառայում է Հայաստանի առաջին հանրապետության բանակի հեծյալ գնդի շարքերում որպես էսկադրոնի հրամանատար։

1921 թ. մայիսին Բաղրամյանը նշանակվում է Խորհրդային Հայաստանի ռազմժողկոմատի շտաբի պետի օգնական՝ օպերատիվ հարցերի գծով։ Այդ պաշտոնում էլ նա 1921 թ. ամռանը մասնակցում է Դարալագյազի և Զանգեզուրի կռիվներին, ձեռք բերում շտաբային աշխատանքի առաջին փորձը։ Հայաստանում քաղաքացիական կռիվների ավարտվելուց հետո Հայկական Կարմիր բանակը 1921 թ. ամռան վերջերից մինչև 1922 թ. աշնան սկզբները Ալեքսանդր Մյասնիկյանի, ապա Հայկ Բժշկյանի (Գայի) ղեկավարությամբ ենթարկվում է վերակազմավորման. սկզբում ստեղծվում է մեկ Հայկական հավաքական բրիգադ, իսկ 1922 թ. սեպտեմբերի 5-ից՝ Հայկական հրաձգային դիվիզիա[4]։ Դիվիզիայի հրամանատար է նշանակվում Ա. Պ. Մելիք-Շահնազարովը։ Հ. Խ. Բաղրամյանը նշանակվում է դիվիզիայի հեծյալ գնդի գնդացրային էսկադրոնի հրամանատար։ 1923 թ. դարնան սկզբներին ՀԽՍՀ զինկոմ Գայը ներկա է լինում դիվիզիայի հեծյալ գնդի զորավարժություններին, գոհ մնում Բաղրամյանի էսկադրոնի գործողություններից և ըստ արժանվույն գնահատում երիտասարդ հրամանատարին։ Հայկական դիվիզիայի հրամանատարությունը նույնպես բարձր է գնահատում էսկադրոնի հրամանատարի մարտական ունակությունները և 1923 թ. աշնանը նրան նշանակում է հեծյալ գնդի հրամանատար, իսկ 1934 թ. ամռանը՝ Ժիտոմիրի 5-րդ հեծյալ դիվիզիայի շտաբի պետ։ Այստեղ նա ծառայեց շուրջ երկուսուկես տարի՝ գործնականում ավելի խորացնելով իր ռազմական գիտելիքները։ Վերադաս հրամանատարությունը մշտապես բարձր է գնահատել նրա շտաբային օրինակելի աշխատանքը, ուստի երբ 1936 թ. բացվեց ԲԳԿԲ-ի գլխավոր շտաբի նորաստեղծ ակադեմիան, Հ. Խ. Բաղրամյանը ուղարկվեց այնտեղ սովորելու, որտեղ ձեռք բերեց այնպիսի գիտելիքներ, որոնք խիստ անհրաժեշտ էին հատկապես պատերազմական պայմաններում օպերատիվ ղեկավարման համար։ Այդ գիտելիքները նա նվիրաբերեց բանակի համար բարձրորակ հրամանատարական կադրեր պատրաստելու գործին, հրատարակեց իր առաջին գիտական ուսումնասիրությունները։ Բանակ վերադառնալու Հ. Խ. Բաղրամյանի ցանկությունը իրականացավ միայն 1940 թ. սեպտեմբերին, երբ ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմ Գ. Կ. Ժուկովի հրամանով գնդապետ Հ. Խ. Բաղրամյանը նշանակվում է Կիևի հատուկ զինվորական օկրուգի 12-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետ[5]։ Այդ պաշտոնում

---

3 И. Х. Баграмян. Указ. соч., с. 25—26.

4 Ռուսական բանակի պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՌԲՊԿԱ), ֆ. 216, ց. 2, գ. 307, թ. 111։

5 ՌԲՊԿԱ, ֆ. 37963, ց. 1, գ. 43, թ. 720։

էր նա, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը։ Պատերազմի առաջին օրը՝ 1941 թ. հունիսի 22-ին Կիևի հատուկ զինվորական օկրուգը վերակազմավորվում է Հարավ-արևմտյան ռազմաճակատի։ Բաղրամյանը նշանակվում է ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ և օպերատիվ բաժնի պետ։ Պատերազմի հենց առաջին օրվանից, ռազմաճակատի համար ծայրահեղ բարդ և անբարենպաստ պայմաններում, նա ոչ մի վայրկյան խուճապի չմատնվեց, ամենաճգնաժամային պահերին անգամ պահպանեց ինքնատիրապետման մարտական ոգին և անսասան հավատը հաղթանակի նկատմամբ։

Անչափ լարված բնույթ էին կրում մարտերը հարավ-արևմտյան և հա-՝ռավային ուղղություններով[6]։

Գնդապետ Բաղրամյանը անմիջական մասնակցություն ունեցավ այդ մարտերի կազմակերպման ու ղեկավարման գործին, անձամբ եղավ տանկային ու մեքենայացված զորամասերում և ճակատային չափազանց վատ պայմաններում, մոտիկից նրանց օպերատիվ-մարտավարական օգտակար հրահանգներ տվեց։ Հունիսյան այդ ծանր մարտերի ժամանակ Հարավ-արևմտյան ռազմաճակատում էր գտնվում ԲԳԿԲ-ի գլխավոր շտաբի պետ, բանակի գեներալ Գ. Կ. Ժուկովը, որը հետագայում վերհիշելով այդ դեպքերը, բարձր է գնահատել գնդապետ Բաղրամյանի անձնվեր աշխատանքը։ «Պետք է նշել ռազմաճակատի շտաբի պետ Մ. Ա. Պուրկաևի և նրա տեղակալ, օպերատիվ բաժնի պետ Ի. Ք. Բաղրամյանի մեծ մտազդաստությունը և փայ-

6 Ի. Ք. Բաղրամյան. Այսպես է սկսվել պատերազմը. Երևան, 1975, էջ 170։

լուն կազմակերպչական ընդունակությունները, որ հանդես բերվեցին այդ խիստ բարդ իրադրության մեջ՝ պատերազմի առաջին օրվանից»[7]։

Այնուհետև գնդապետ Բաղրամյանն ակտիվորեն մասնակցել է Կիևի պաշտպանությանը, որը տեղի է ունեցել 1941 թ. հուլիսի 7-ից մինչև սեպտեմբերի 26-ը[8]։

Հայրենիքը բարձր գնահատեց գնդապետ Բաղրամյանի դրսևորած մարտավարական տաղանդը։ ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահի 1941 թ. օգոստոսի 12-ի որոշմամբ նրան շնորհվեց գեներալ-մայորի կոչում[9]։ Մի քանի օր անց ռազմաճակատի շտաբի կուսակցական կազմակերպությունը գեներալ-մայոր Բաղրամյանին ընդունեց կուսակցության անդամ[10]։

Կիևի պաշտպանության մարտերում ցուցաբերած սխրանքի համար Բաղրամյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով[11]։ Դա Հովհաննես Բաղրամյանի առաջին մարտական պարգևն էր Հայրենական մեծ պատերազմում։

Այնուհետև նա գլխավորեց համալրված Հարավ-արևմտյան ռազմաճակատի շտաբի օպերատիվ բաժնի աշխատանքները և այդ պաշտոնում գործուն մասնակցություն ցուցաբերեց Ռոստովյան օպերացիայի պլանի մշակման և այն իրականացնող զորքերի ղեկավարման աշխատանքներին[12]։ Դոնի Ռոստովի մոտ տարած հաղթանակը մեծ չափով կանխորոշեց Մոսկվայի տակ 1941 թ. դեկտեմբերի 5-ին խորհրդային զորքերի սկսած հակահարձակման հաղթական ավարտը։

Դեկտեմբերի 6-ից մինչև 16-ը նա մասնակցեց Մոսկվայի ճակատամարտի բաղկացուցիչ մասը կազմող Ելեցյան օպերացիային, որի հետևանքով վերացվեց հակառակորդի Ելեցյան ելուստը, զգալի օգնություն ցույց տրվեց Արևմտյան ռազմաճակատի ձախ թևի զորքերին։ Ելեցյան օպերացիան իրագործվեց համեմատաբար արագ թափով, ձմեռային դժվարին պայմաններում և մեծ չափով նպաստեց Մոսկվայի ճակատամարտի հաղթական ընթացքին։

Խոսելով Մոսկվայի մոտ տարած հաղթանակի մասին Բաղրամյանը գրել է. «Մոսկվայի տակ տարած հաղթանակը Հայրենական մեծ պատերազմի առաջին տարվա ռազմաքաղաքական վճռական իրադարձությունն էր։ Դժվար է գերագնահատել նրա հետևանքները պատերազմի հետագա ընթացքի վրա։ Վերջնականապես տապալվեց «կայծակնային պատերազմի» հիտլերյան պլանը, պսակազերծ եղավ հիտլերյան բանակի անհաղթելիության մասին առասպելը։ Աշխարհի ժողովուրդները առաջին անգամ հավատացին ագրեսորին սանձելու հնարավորությանը»[13]։

Ռոստովյան և Ելեցյան գործողությունների մշակման գործում իր արժեքավոր ավանդը ներդնելու և դրանք փայլուն կերպով իրականացնելու համար ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահի 1941 թ. դեկտեմբերի 27-ի որոշմամբ Բաղրամյանին շնորհվեց գեներալ-լեյտենանտի կոչում[14]։ Հենց այդ ժամանակ էլ նա առաջ քաշվեց և նշանակվեց Հարավ-արևմտյան ուղղության շտաբի պետ[15]։

---

7 Г. К. Жуков. Воспоминания и размышления. М., 1970, с. 241.

8 Ի. Ք. Բաղրամյան. Հերոս քաղաքը Դնեպրի ափին. Երևան, 1967, էջ 122։

9 «Правда», 1941, 13 августа.

10 И. Х. Баграмян. Мои воспоминания, с. 300.

11 Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՌԴ ՊՆԿԱ), ֆ. 33, ց. 682524, գ. 419, թ. 2։

12 Освобождение городов, М., 1985, с. 210.

13 Ի. Ք. Բաղրամյան. Այսպես է սկսվել պատերազմը, էջ 677։

14 «Правда», 1941, 28 декабря.

15 1942 թ. մայիսի 4-ին Բաղրամյանը նշանակվեց Հարավ-արևմտյան ուղղության շտաբի պետ, միաժամանակ կատարելով Հարավ-արևմտյան ռազմաճակատի շտաբի պետի պարտականությունները։

1942 թ. գարունը և ամառը անհաջողությունների շրջան եղան խորհրդային զորքերի համար։ Հակառակորդին հաջողվեց ապակողմնորոշել խորհրդային զորքերի Գերագույն գլխավոր հրամանատարությանը՝ ռազմավարական հարձակման գլխավոր ուղղությունը որոշելիս։ Գերագույն գլխավոր հրամանատար Ի. Վ. Ստալինը համոզված էր, որ թշնամու հարձակման գլխավոր ուղղությունը լինելու է Մոսկվան, այլ ոչ թե հարավ-արևմտյան ուղղությունը։ Ուստի Զորակայանը համապատասխան պահեստային ուժեր չկենտրոնացրեց այդ ուղղությամբ։ Հակառակ դրան թշնամին այլ տեղամասերից այստեղ փոխադրեց թարմ ուժեր, ստեղծելով կենդանի ուժի ու տեխնիկայի գերակշռություն, մայիս-հունիս ամիսներին Խարկովի ուղղությամբ խորհրդային զորքերին հասցրեց ծանր հարվածներ և հարավային ուղղությամբ շարժվեց դեպի Ստալինգրադ ու Կովկաս[16]։

Հուլիսի 15-ին Բաղրամյանը նշանակվեց Արևմտյան ռազմաճակատի 16-րդ բանակի հրամանատար, որտեղ ծառայեց մինչև 1943 թ. նոյեմբերի 17-ը։ Հենց այդ ընթացքում էր, որ առանձնապես փայլեց գեներալի զորավարական տաղանդը և նրա անունը հայտնի դարձավ ամբողջ երկրին։

Բաղրամյանի գլխավորությամբ 16-րդ բանակը զգալի հաջողությունների հասավ նաև 1943 թ. ձմեռային պայմաններում, Ժիզդրայի ուղղությամբ հարձակման ժամանակ։ Դրա շնորհիվ հակառակորդը ստիպված էր հեռանալ Ռժև—Վյազմայի հենակետից, որի հետևանքով իսպառ չքացավ Մոսկվայի ուղղությամբ թշնամու նոր հարձակման վտանգը։ Ռազմաճակատի գիծը կրճատվեց 300 կիլոմետրով, ինչը մեր զորքերի համար ճանապարհ բացեց դեպի արևմուտք։ Ժիզդրայի ուղղությամբ բանակի մարտական գործողությունները հմտորեն ղեկավարելու համար գեներալ-լեյտենանտ Հ. Խ. Բաղրամյանը 1943 թ. ապրիլի 9-ին պարգևատրվեց Կուտուզովի 1-ին աստիճանի շքանշանով[17]։ Բարձր գնահատվեց նաև բանակի ողջ անձնակազմի ցուցաբերած խիզախությունն ու անձնազոհությունը. ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի 1943 թ. ապրիլի 16-ի հրամանով 16-րդ բանակը վերակազմավորվեց 11-րդ գվարդիականի[18]։

Բաղրամյանի զորավարական տաղանդը նոր ուժով դրսևորվեց 1943 թ. ամռանը՝ Օրյոլ—Կուրսկ—Բելգորոդի շրջանում հուլիսի 5-ից մինչև օգոստոսի 23-ը տեղի ունեցած Հայրենական մեծ պատերազմի ամենախոշոր[19] և վճռական նշանակություն ունեցող ճակատամարտերից մեկում։ Կուրսկի ճակատամարտում ոչ միայն ամբողջովին ջախջախվեցին հակառակորդի 22 հետևակային և 8 տանկային ընտիր դիվիզիաներ, որոնց օգնությամբ Հիտլերը մտադրվել էր վրեժ լուծել Ստալինգրադյան ճակատամարտում կրած խայտառակ պարտության համար[20], այլև ընդմիշտ թաղվեց գեբելսյան ստահոդ քարոզչության ստեղծած այն առասպելը, թե խորհրդային զորքերը կարող են հաղթանակ տանել միայն ձմեռային պայմաններում։

Օրյոլյան գործողության հետևանքով Բրյանսկի, Կենտրոնական և Արևմտյան ռազմաճակատների զորքերը ջախջախեցին հակառակորդի Օրյոլյան խմբավորման 15 դիվիզիա, դեպի արևմուտք շարժվեցին 150—200 կմ՝ ազատագրելով հազարավոր բնակավայրեր, գյուղեր, քաղաքներ, այդ թվում և

---

16 Советская Военная Энциклопедия, т. I, М., 1976, с. 394—395.

17 «Правда», 1943, 10 апреля.

18 Советская Военная Энциклопедия, т. 2, М., 1976, с. 491.

19 Համեմատության կարգով նշենք, որ Մոսկվայի ճակատամարտում երկու կողմերից մարտերին մասնակցել է շուրջ 1,5, Սաալինգրադի ճակատամարտում՝ 2, իսկ Կուրսկի ճակատամարտում՝ ավելի քան 3 միլիոն մարդ։

20 Ստալինգրադյան ճակատամարտը տեղի ունեցավ 1942 թ. հուլիսի 17-ից մինչև 1943 թ. փետրվարի 2-ը և ավարտվեց գերմանաֆաշիստական զորքերի խոշոր խմբավորումների շրջապատումով և լրիվ ջախջախումով. հակառակորդն այստեղ կորցրեց ավելի քան 1,5 միլիոն մարդ։

Օրյոլը։ Նույն օրը Տափաստանային ռազմաճակատի զորքերի կողմից ազատագրվեց Բելգորոդը։ Ի պատիվ ռուսական այդ հինավուրց քաղաքներն ազատագրող զորքերի, Մոսկվայում առաջին անգամ տրվեցին հրետանային համազարկեր և հրավառություն, որն այնուհետև Հայրենական մեծ պատերազմի տարիներին դարձավ ավանդույթ։

Հուլիսի 12-ից մինչև օգոստոսի 17-ը 11-րդ գվարդիական բանակը հարձակողական մարտերով անցավ ավելի քան 200 կմ, ազատագրեց շուրջ 5000 քառ. կմ տարածք՝ 700 բնակավայրերով հանդերձ, որոնց թվում՝ Կարաչև քաղաքը, Ուլյանովո, Զնամենսկոյե, Խոտինեց, Իլյինսկոյե շրջանային կենտրոնները և այլն[21]։

Օրյոլյան մարտերի ընթացքում բանակի գործողությունները հմտորեն ղեկավարելու համար ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահի 1943 թ. օգոստոսի 27-ի որոշմամբ Բաղրամյանին շնորհվում է դեներալ-գնդապետի զինվորական կոչում[22]։ Նույն օրը հրապարակվում է ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը՝ գվարդիայի դեներալ-գնդապետ Հ. Խ. Բաղրամյանին մարտերում ձեռք բերած հաջողությունների և այդ ընթացքում դրսևորած հմտության ու քաջության համար Սուվորովի 1-ին աստիճանի բարձրագույն զորավարական շքանշանով պարգևատրելու մասին[23]։

Հաշվի առնելով Բաղրամյանի օրեցօր աճող զորավարական կարողությունները, 1943 թ. նոյեմբերի 17-ին նրան նշանակում են 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար։ Մեկ օր անց մամուլում հրապարակվեց ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշումը՝ Բաղրամյանին բանակի դեներալի կոչում շնորհելու մասին[24]։ Բաղրամյանի ղեկավարությամբ 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը թշնամու դեմ տարան մի շարք հաղթանակներ, որոնք զգալիորեն մոտեցրին Հաղթանակի օրը և մեծ չափով նպաստեցին զորավարի փառքի տարածմանը։ Այստեղ առաջին նշանակալից հաջողությունը ձեռք բերվեց Վիտեբսկի ուղղությամբ տեղանքի ու եղանակի ան-բարենպաստ պայմաններում անցկացված Գորոդոկյան գործողության ժամանակ։ 1943 թ. դեկտեմբերի 13—31-ը ռազմաճակատի զորքերը առաջ շարժվեցին ավելի քան 60 կմ, դեկտեմբերի 24-ին ազատագրեցին Գորոդոկ քաղաքը, որը թշնամին վեր էր ածել ամրացված հզոր հենակետի։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Բաղրամյանն իր զորավարական փառքի գագաթնակետին հասավ 1944 թ. ամռանը՝ Բելոռուսական խոշորամասշտաբ հարձակողական գործողության ժամանակ, որը հայտնի է նաև «Բագրատիոն» անունով։ Ռազմաճակատի հրամանատարը Զորակայանում մասնակցել էր այդ գործողության պլանի քննարկմանը և անձամբ օգտակար առաջարկություններ արել հարձակման գլխավոր հարվածի ուղղության վերաբերյալ։ 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը հունիսի 23-ին հրետանու, տանկերի և ավիացիայի հզոր աջակցությամբ անցան հարձակման։ Հաջողությամբ հաղթահարելով հիմնական ջրային արգելքը և խորտակելով հակառակորդի մի քանի շերտերից բաղկացած պաշտպանությունը, Բաղրամյանի բանակները շարժվեցին Վիտեբսկի և Պոլոցկի ուղղություններով։ Հունիսի 26-ին ազատագրվեց Բելոռուսիայի մարզային կենտրոն, երկաթուղային խոշոր հանգույց Վիտեբսկը, իսկ հուլիսի 4-ին՝ Պոլոցկը[25]։ Այնուհետև զարգացնելով ձեռք բերված հաջողությունը, Բաղրամյանի զորքերը

---

21 ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 11-րդ գվարդիական բանակի, ց. 5916, գ. 180, թ. 116։

22 «Правда». 1943, 28 августа.

23 Նույն տեղում, 30 օգոստոսի։

24 Նույն տեղում, 18 նոյեմբերի։

25 Վիտեբսկի և Պոլոցկի ազատագրման ժամանակ աչքի ընկավ 51-րդ գվարդիական (նախկին Հայկական 76-րդ) հրաձգային դիվիզիան, որն արժանացավ Վիտեբսկյան, իսկ նրա գնդերը՝ Պոլոցկյան անվանման։

մտան Լիտվա և սրընթաց առաջխաղացումով գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրեցին հազարավոր բնակավայրեր, որոնց թվում՝ հուլիսի 22-ին Պանևեժիս, 27-ին՝ Շաուլյայ քաղաքները, ապա մտան Լատվիայի տարածք, օգոստոսի 1-ին ազատագրեցին Ելգավա քաղաքը և շարժվելով առաջ, դուրս եկան Ռիգայի ծովածոց՝ գրանով իսկ հակառակորդի «Հյուսիս» բանակախումբը կտրելով Արևելյան Պրուսիայից։

Հայրենիքը բարձր գնահատեց 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերի մարտական սխրանքները. 74157 մարդ արժանացավ կառավարական բազմապիսի պարգևների, իսկ մարտերում առավել աչքի ընկած 156 հոգու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում։ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. հուլիսի 29-ի հրամանագրով, Բելոռուսական գործողության ժամանակ ռազմաճակատի զորքերը հմտորեն ղեկավարելու, այդ ընթացքում ձեռք բերած ակնառու հաջողությունների, ինչպես նաև ցուցաբերած արիության ու հերոսության համար, բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում[26]։

Բաղրամյանի մարտական կենսագրության փառապանծ էջերից են Մերձբալթյան և Արևելապրուսական ռազմավարական գործողությունները, որոնց ընթացքում խորհրդային զորքերը ազատագրեցին Մերձբալթիկան, խորտակեցին պրուսական յունկերների որջը՝ Քյոնիգսբերգը, որի կայազորը, գեներալ Օտտո Լաշի գլխավորությամբ, անձնատուր եղավ։ Ընդամենը չորս օր տևած մարտերի ընթացքում ոչնչացվեց հակառակորդի շուրջ 42 հազար զինվոր ու սպա, 120 ինքնաթիռ, 1196 հրանոթ, 588 ականանետ, 10 տանկ ու ինքնագնաց հրանոթ, 82 զրահատրանսպորտյոր, 1719 ավտոմեքենա, շուրջ 2000 գնդացիր, ավերվեց 143 դոտ ու բերդամաս, գերի վերցվեց 92 հազար մարդ, այդ թվում 1800 սպա ու գեներալ, ավար վերցվեց ավելի քան 1500 ականանետ, 128 ինքնաթիռ և այլն[27]։

Քյոնիգսբերգի գրավման ժամանակ ռազմավարական խոշոր զորախմբի գործողությունները հմտորեն և արիաբար ղեկավարելու համար բանակի գեներալ Բաղրամյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945 թ. ապրիլի 20-ի հրամանագրով երկրորդ անգամ պարգևատրվեց Սուվորովի 1-ին աստիճանի շքանշանով[28]։

Հայրենական մեծ պատերազմի մարտական վերջին գործողությունը, որին մասնակցեց բանակի գեներալ Բաղրամյանը, դա Քյոնիգսբերգից արևմուտք՝ Զեմլանդյան թերակղզում պատսպարված ֆաշիստական զորքերի 100 հազարանոց խմբավորման ջախջախման և Բալթիկ ծովի ափին թշնամու վերջին ռազմածովային բազա հանդիսացող Պիլլաու (Բալտիյսկ) նավահանգստի գրավման գործողությունն էր, որի վերջին օրերին Բաղրամյանը Ջորակայանի որոշմամբ նշանակվեց 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի հրամանատար։

Պիլլաուի գրավումից հետո 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանի հիմնական խնդիրն էր՝ նվազագույն կորուստներով ավարտել հակառակորդի զեմլանդական խմբավորման զորքերի մնացորդների ջախջախումը Ֆրիշես-Ներունգ ցամաքալեզվակում։ 1945 թ. մայիսի 9-ին՝ Հաղթանակի օրը, հակառակորդի ավելի քան 30 հազարանոց զորախումբը անձնատուր եղավ։ Վերջացավ Հայրենական մեծ պատերազմը, որին առաջին օրվանից մինչև վերջ, 1418 օր ու գիշեր, գործուն մասնակցել էր Հովհաննես Բաղրամյանը և իր արժանի ավանդը ներդրել մարդկության ոխերիմ թշնամի ֆաշիզմի դեմ տարած համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող հաղթանակի կոփման գործում։ Այդ հաղթանակի շնորհիվ մարդկությունն ազատվեց ֆաշիստական

---

26 «Правда», 1944, 29 июля.

27 Ի. Ք. Բաղրամյան. Այսպես մենք հասանք հաղթանակի, Երևան, 1970, էջ 735։

28 «Правда», 1945, 20 апреля.

ստրկացման վտանգից, փրկվեց համաշխարհային քաղաքակրթությունը, իսկ աշխարհի շատ ժողովուրդներ ազգային-ազատագրական զարթոնք ապրեցին, որի հետևանքով փլվեց մինչ այդ եղած գաղութատիրական համակարգը։ Եվրոպական երկրների մի շարք ժողովուրդներ (հրեաներ, լեհեր, բելոռուսներ և այլն) ուղղակի փրկվեցին լիակատար ոչնչացումից։ Այդ հաղթանակի շնորհիվ հայ ժողովուրդը նույնպես փրկվեց մի նոր եղեռնից։ Չպետք է մոռանալ, որ ֆաշիստական Գերմանիայի դաշնակից Թուրքիան դեռ պատերազմի առաջին շրջանում Խորհրդային Հայաստանի սահմաններին կենտրոնացրել էր 26 մարտունակ դիվիզիա և հարմար պահի էր սպասում այնտեղ ներխուժելու՝ հայերին աշխարհի երեսից իսպառ վերացնելու համար։ Սակայն Մոսկվայի, ապա Ստալինգրադի մոտ տարած հաղթանակները ստիպեցին Թուրքերին հրաժարվել իրենց ստոր մտադրությունից։ Այդ հաղթանակներում իր արժանի ավանդն էր ներդրել նաև բանակի գեներալ Բաղրամյանը։

Հետպատերազմյան տարիներին Հ. Խ. Բաղրամյանը շարունակել է զինվորական ծառայությունը ԽՍՀՄ զինված ուժերի շարքերում, վարել մի շարք պատասխանատու պաշտոններ։ 1945—1954 թթ. նա եղել է Մերձբալթյան զինվորական օկրուգի զորքերի հրամանատար, 1954—1955 թթ.՝ ԽՍՀՄ Պաշտպանության մինիստրության գլխավոր տեսուչ, 1955—1956 թթ.՝ Պաշտպանության մինիստրի տեղակալ՝ ընդհանուր հարցերի գծով։ 1955 թ. մարտի 11-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանին շնորհվեց Խորհրդային Միության մարշալի կոչում[29]։ 1956 թ. Խորհրդային Միության մարշալ Բաղրամյանը նշանակվում է Գլխավոր շտաբի ակադեմիայի պետ, 1958 թ.՝ Պաշտպանության մինիստրի տեղակալ, թիկունքի զորքերի պետ, իսկ 1968 թ. ապրիլին Պաշտպանության մինիստրության գլխավոր տեսուչների խմբի գլխավոր տեսուչ։

ԽՍՀՄ զինված ուժերին մատուցած ակնառու ծառայությունների, Հայրենական մեծ պատերազմում գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մղված պայքարում ցուցաբերած արիության և հերոսության համար, ինչպես նաև ծննդյան 80-ամյակի առթիվ մարշալ Բաղրամյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1977 թ. դեկտեմբերի 1-ի հրամանագրով արժանացավ Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչման[30]։

Մինչև իր կյանքի վերջը Խորհրդային Միության կրկնակի հերոս Հ. Խ. Բաղրամյանը Պաշտպանության մինիստրության գլխավոր տեսուչների խմբի գլխավոր տեսուչի պաշտոնում զգալի աշխատանք կատարեց զինված ուժերի ամրապնդման և հատկապես երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում։ Մեծ զորավարը հետպատերազմյան տարիներին, սկսած 1952 թ. եղել է ԽՄԿԿ Կենտկոմի անդամության թեկնածու, 1961-ից՝ Կենտկոմի անդամ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 2—9-րդ գումարման պատգամավոր։ Հայրենիքը բարձր է գնահատել մարշալ Բաղրամյանի ծառայությունները։ Հերոսի երկու Ոսկե աստղ մեդալներից բացի, զորավարը պարգևատրվել էր՝ Լենինի 7, Հոկտեմբերյան հեղափոխության 1,

---

29 «Правда», 1955, 11 марта

30 «Правда», 1977, 2 декабря.

Կարմիր դրոշի 3, Սուվորովի 1-ին աստիճանի 2, Կուտուզովի 1-ին աստիճանի 1, «Հայրենիքի և ԽՍՀՄ զինված ուժերի ծառայության համար» 3-րդ աստիճանի շքանշաններով, բազմաթիվ մեդալներով, պատվավոր անձնական զենքով, մի շարք օտարերկրյա շքանշաններով ու մեդալներով։

Իր զինվորական, պետական, հասարակական գործունեության ընթացքում մարշալ Բաղրամյանը մշտապես կապված է եղել հարազատ ժողովրդի հետ, հաճախակի այցելել է հայրենիք՝ մասնակցել մի շարք հոբելյանական միջոցառումների, հանդիպումներ ունեցել Արարատյան դաշտավայրի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայքի, Զանգեզուրի և Արցախի աշխատավորության և մտավորականության լայն խավերի հետ։ Նա սերտ բարեկամական կապեր ուներ Մարտիրոս Սարյանի, Վիկտոր Համբարձումյանի, Արամ Խաչատրյանի, Անաստաս և Արտեմ Միկոյանների, իր համագյուղացի՝ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանի, Խորհրդային Միության նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովի, գիտության, մշակույթի և պետական բազմաթիվ այլ գործիչների հետ։

Ականավոր զորավարի կյանքի թելը կտրվեց 1982 թ. սեպտեմբերի 21-ին Մոսկվայում, թաղումը տեղի ունեցավ սեպտեմբերի 24-ին՝ Կարմիր հրապարակում, Կրեմլի պարսպի մոտ։

МАРШАЛ БАГРАМЯН

(К 100-летию со дня рождения)

Доктор ист. наук К. А. АРУТЮНЯН

Резюме

В славной плеяде полководцев Советской Армии почетное место занимает талантливый сын армянского народа, дважды Герой Советского Союза, Маршал Советского Союза Иван (Ованес) Христофорович (Хачатурович) Баграмян. Восемнадцатилетним юношей в 1915 г. он добровольно вступил в русскую армию, на Кавказском фронте активно участвовал в боях против турецких варваров, которые в годы I мировой войны истребили около полутора миллионов армян и превратили в дымящуюся пустыню всю Западную Армению. «Я не мог оставаться в стороне от борьбы против ненавистных врагов моего народа. При этом отчетливо понимал, что только плечом к плечу с российским солдатом мне будет под силу сражаться против турецких палачей»,—писал он в своих воспоминаниях. В 1917 г. И. Баграмян окончил школу прапорщиков, в мае 1918 г.отличился в историческом Сардарапатском сражении. Затем служил в армии сначала Республики Армении, затем в Красной Армии. Получив блестящее военное образование в высших военных учебных заведениях Москвы и Ленинграда, занимал ряд командных должностей в Красной Армии. Особенно полководческий талант И. Баграмяна проявился в годы Великой Отечественной войны. В начале войны он был начальником штаба Юго-Западного фронта, с июля 1942 г.—командующим 16-й (11-й гвардейской) армии, с ноября 1943 г. по февраль 1945 г.—командующим 1-го Прибалтийского фронта, затем командующим Землянской группы войск, а с апреля 1945 г.—командующим войсками 3-го Белорусского фронта. В годы войны генерал И. Баграмян активно участвовал в организации обороны Киева и проведении Киевской оборонительной операции, в планировании и проведении контрнаступления под Ростовом, в Елецкой наступательной операции,

которая являлась составной частью битвы под Москвой, в Курской битве, в Белорусской операции и в боях за освобождение Литвы и Латвии в 1944 г. 9 апреля 1945 г. войска И. Баграмяна овладели городом-крепостью Кенигсбергом, а 25 апреля взяли крупную военно-морскую базу Пиллау (Балтийск). 11 марта 1955 г. И. Х. Баграмяну было присвоено звание Маршал Советского Союза. В послевоенные годы И. Х. Баграмян занимал ряд высших командных постов в Вооруженных Силах СССР. Несмотря на большую занятость, маршал Баграмян вел активную общественно-политическую и военно-научную деятельность. Он автор ряда книг, которые вошли в сокровищницу советской военно-мемуарной литературы, были изданы также за рубежом. И. Х. Баграмян скончался 21 сентября 1982 г. в Москве, похоронен на Красной площади у Кремлевской стены. И. Х. Баграмян всегда был тесно связан со своим родным народом, часто бывал в Армении. Дружеские узы связывали его с М. Сарьяном, В. Амбарцумяном, А. Хачатуряном, Анастасом и Артемом Микоянами, односельчанином маршалом бронетанковых войск А. Бабаджаняном, Адмиралом Флота Советского Союза И. Исаковым и многими другими государственными деятелями, представителями науки и культуры. Армянский народ с большим уважением хранит память о своем славном сыне. Его именем назван район в Армении, один из центральных проспектов Еревана, станция метрополитена, Объединенная техническая школа ДОСААФ г. Гюмри, одна из показательных воинских частей Вооруженных Сил Армении.

MARSHAL BAGHRAMIAN

(To his birth centenary)

Doctor of Hist. Sciences K. A. HAROUTUNIAN

S u m m a r y

Hovhannes (Ivan) Christopher Baghramian, the talented son of the Armenian nation, twice Hero of the USSR, Marshal of the USSR, takes an honoured place in the glorious pleiad of the Soviet Army. In 1915 the 18-year-old youth joined the Russian Army as a volunteer and at the Caucasus front took an active part in the battles against Turkish barbarians who exterminated over 1,5 million Armenians and turned the whole Western Armenia into a smoking desert. In 1917 Baghramian finished the school of ensigns, and in May of 1918 distinguished himself in the historical Sardarabat battle. Later, he served first in the army of Republic of Armenia, then in the Red Army. Receiving excellent military education in higher military schools of Moscow and Leningrad he held a number of top positions in the Red Army of the USSR. His commanding talent occurred especially in the Great Patriotic War years. General Baghramian took an active part in organizing the Kiev defence, and conducting its defencive operation, in planning and leading the contrattack of Kiev, the offensive operation of Eletsk, which was the main component of Moscow battle, as well as in Kursk battle, Byelorussian operation, and, in 1944, in battles for liberation of Lithuania and Latvia. On March 11, 1955 Baghramian was conferred the rank of Marshal of the Soviet Union. In post-war years he was put in command of varios armed forces of the USSR. In spite of his business he was engaged in the social-political and military research activities. He is an author of a number of books, which became part of the treasure house of the Soviet military-memoir literature. He has some publications abroad as well. Baghramian died on September 21, 1982 in Moscow, and was buried by the Kremlin wall in Red Square. He was always in close touch with his nation, and often visited Armenia.